

**Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր**  
**ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԽՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ**  
**ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ**  
**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ**  
**N ՍՄ-ԲԸԱՀ-ԾՁԲ-14/04-2/1-2/4-2/7**

ք. Կապան

« 27 » հունիսի 2014թ.

«Սյունիքի մարզպետարանը, ի դեմս մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Պատվիրատու» մի կողմից և «ՎԻԼՀԱՄ» ՍՊԸ-ը ի դեմս տնօրեն Վ. Բաղայանի, որը գործում է «ՎԻԼՀԱՄ» ՍՊԸ կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ Սյունիքի մարզի «Քաջարան համայնքի թիվ 5 դպրոցի վերանորոգման», «Գորիս համայնքի թիվ 3 դպրոցի վերանորոգման» «Սիսիան համայնքի թիվ 5 դպրոցի պատերի և հիմքերի ուժեղացման» շինարարական աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների մատուցումը (այսուհետև՝ **Ծառայություն**)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտվել է կական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել **Պատվիրատուին**:

2.4.4 Եթե շինարարական աշխատանքների երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա **Կատարողը** պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար **Պատվիրատուին** վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ **Պատվիրատուի** կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

### 3. Ծառայության հանձնման և ընդունման կարգը

3.1 **Պայմանագրի** կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են **Պատվիրատուի** և **Կատարողի** միջև հանձնման ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

**Կատարողը Ծառայության** մատուցման ավարտից 3 /երեք/ աշխատանքային օրվա ընթացքում **Պատվիրատուին** է հանձնում մատուցված **Ծառայության** մասին իր կողմից ստորագրված հանձնման ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված **Ծառայությունը** համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և **Պատվիրատուն**՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) **Կատարողի** նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

3.3 **Պատվիրատուն** հանձնման ընդունման արձանագրությունը ստանալու պահից 3 /երեք/ օրյա ժամկետում **Կատարողին** է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ **Ծառայությունը** չընդունելու պատճառաբանված մերժումը:

### 4. Պայմանագրի գինը

4.1. Սույն պայմանագրով **Կատարողի** մատուցման ենթակա **Ծառայության**՝ «**Քաջարան համայնքի թիվ 5 դպրոցի վերանորոգման**», «**Գորիս համայնքի թիվ 3 դպրոցի վերանորոգման**» և «**Սիսիան համայնքի թիվ 5 դպրոցի պատերի և հիմքերի ուժեղացման**» աշխատանքների հեղինակային հսկողության ծառայության մատուցման գինը կազմում է **530000.0 (հինգ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ**: Գինը ներառում է **Կատարողի** կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ընդ որում՝

- «**Քաջարան համայնքի թիվ 5 դպրոցի վերանորոգման**» աշխատանքների հեղինակային հսկողության ծառայության մատուցման համար – 100,0 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ,
- «**Գորիս համայնքի թիվ 3 դպրոցի վերանորոգման**» աշխատանքների հեղինակային հսկողության ծառայության մատուցման համար – 100,0 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ,
- «**Սիսիան համայնքի թիվ 5 դպրոցի պատերի և հիմքերի ուժեղացման**» աշխատանքների հեղինակային հսկողության ծառայության մատուցման համար – 330,0 /երեք հարյուր երեսուն հազար/ ՀՀ դրամ:

**Ծառայության** մատուցման գինը կայուն է և **Կատարողն** իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ **Պատվիրատուն** նվազեցնելու այդ գինը:

4.2 **Պատվիրատուն** իրեն մատուցած **Ծառայության** դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները **Կատարողի** հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 րանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված **Ծառայության** դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014 թ. դեկտեմբերի 25-ը:

## 5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 **Կատարողը** պատասխանատվություն է կրում **Ծառայության** մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր գնման՝ ժամանակացույցին չհամապատասխանող **Ծառայություն** մատուցելու յուրաքանչյուր դեպքում **Կատարողից** գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված **Ծառայության** մատուցման ժամկետը խախտելու դեպքում **Կատարողից** յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված **Ծառայության** գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են **Ծառայություն** մատուցելու արդյունքում **Կատարողին** վճարման ենթակա գումարների հետ:

5.5 **Պատվիրատուի** կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում **Պատվիրատուի** նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը **Կողմերին** չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (Ֆորս-մաժոր)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված **Համաձայնագրերով** պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. Այլ պայմաններ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և զործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, **Կատարողը** ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ **Կատարողին** հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո **Պատվիրատուն** իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, **Պատվիրատուն** չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով **Կատարողի** համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ **Կատարողը** պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով **Պատվիրատուի** կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ **Պատվիրատուի** ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն **Կողմերի** փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական

հատկացումների նվազեցման դեպքերի: Ուղղորդում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող **Աշխատանքի** ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Եթե պետության կարիքների համար կնքվելիք պայմանագրի գինը գերազանցում է գնումների բազային միավորի երեք հարյուր հիսնապատիկը, ապա տվյալ պայմանագիրն ուժի մեջ մտնելու պայման է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ գնման ընթացակարգի արդյունքների հաստատումը:

Եթե գործակալության միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է **„Պատվիրատուի,,** համաձայնությամբ:

2) **„Կատարողն,,** է պատասխանատվություն կրում գործակալի պարտավորությունների համար:

**„Ծառայության,,** մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ **„Պատվիրատուի,,** մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

7.4 Սույն **Պայմանագրի** պատշաճ կատարման պայմաններում կողմերի (**Կատարող** և (կամ) **Պատվիրատու**) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում **Կատարողի** կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է **Կատարողը**:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը և հավելվածները կազմված են 4 էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 2 և 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անրաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է: պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

### 8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

«Պատվիրատու»

Սյունիքի մարզպետարան  
ք. Կապան Գ.Նժդեհի - 1  
ՀՀ ՖՆ Կենտրոնական գանձապետարան  
Հ/Հ 900312000046  
ՀՎՀՀ 09415375



«Կատարող»

«ՎԻԼՀԱՄ» ՍՊԸ

ք. Կապան, Լեոնազործների 14/5

«Կատարողի պարտավորության» ՓԲԸ, «Կապան», մ/6

ՀՀ 947080149005

ՀՀ 09416841



Վ. Բաղայան

(ստորագրություն)



**Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն Բ Ն ՈՒ Թ Ա Գ Ի Ր  
Գ Ն Մ Ա Ն Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց**

**Հ Ե Ղ Ի Ն Ա Կ Ա Յ Ի Ն Հ Ս Կ Ո Ղ ՈՒ Թ Յ Ա Ն  
Ծ Ա Ռ Ա Յ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր Ի Ի Ր Ա Կ Ա Ն Ա Ց Մ Ա Ն**

**„Քաջարան համայնքի թիվ 5 դպրոցի վերանորոգման,,  
աշխատանքների**

1	<b>Շինարարության որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման բնութագիրը</b>	
	Աշխատանքների նկատմամբ /շինմոնտաժային աշխատանքների կատարման բոլոր փուլերում/ հեղինակային հսկողության /այսուհետ՝ Հսկողություն/ ծառայության մատուցում	
2	<b>Հսկողության ենթակա աշխատանքների անվանումը</b> /Համաձայն ծավալաթերթ նախահաշվի/	
	Ուսումնական մասնաշենքի որոշ պատուհանների, դռների, հատակների և պատերի քանդում և նորերի տեղադրում: Ներքին հարդարման, սայվածքի, ներքին ջրահեռացման ու ջրամատակարարման, ներքին էլեկտրական լուսավորության աշխատանքների իրականացում: Արտաքին ջրագծի և կոյուղագծի կառուցում:	
3	<b>Տեխնիկական առաջադրանք</b>	
	Հսկողության իրականացում համաձայն <b>Պատվիրատուի</b> կողմից պատվիրված և փորձաքննություն անցած նախագծանախահաշվային փաստաթղթերի պահանջների:	
	Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով կատարվող աշխատանքների համապատասխանության ապահովում նախագծային լուծումներին, շինարարական նորմերին ու կանոններին:	
	Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով օգտագործվող նյութական ռեսուրսների որակը հավաստող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև օգտագործվող նյութերը, իրերի և կառուցվածքների որակը, աշխատանքների կատարման տեխնոլոգիաները ստանդարտներին, տեխնիկական, նորմատիվ և նախագծային փաստաթղթերի այլ պահանջներին համապատասխանության ապահովում:	
	Հսկողական ստուգման միջոցով իրականացվող աշխատանքների կատարման ժամկետների համապատասխանության, ինչպես նաև թերությունների բացահայտման և վերացման ապահովում:	
	Հսկողական չափագրությունների միջոցով փաստացի կատարված շինմոնտաժային աշխատանքների և նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների ծավալների և հաշվարկների համապատասխանության մշտական ապահովում:	
	Կատարողական ակտի կազմման աշխատանքներին մասնակցության ապահովում:	
4	<b>Ծառայությունների մատուցման ավարտում</b> – շինմոնտաժային աշխատանքների ավարտի հետ:	
5	<b>Ծառայության մատուցման ժամկետը</b>	
	Սկիզբը	Ավարտը
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	30.09.2014թ.

**„Գորիս համայնքի թիվ 3 դպրոցի վերանորոգման,,  
աշխատանքների**

1	<b>Շինարարության որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման բնութագիրը</b>
	Աշխատանքների նկատմամբ /շինմոնիտաժային աշխատանքների կատարման բոլոր փուլերում/ հեղինակային հսկողության /այսուհետ՝ Հսկողություն/ ծառայության մատուցում
2	<b>Հսկողության ենթակա աշխատանքների անվանումը</b> /Համաձայն ծավալաթերթ նախահաշվի/
	Ուսումնական թիվ 1 և 2 մասնաշենքերի տանիքների քանդման ու նորի իրականացման աշխատանքների կատարում:
3	<b>Տեխնիկական առաջադրանք</b>
	Հսկողության իրականացում համաձայն Պատվիրատուի կողմից պատվիրված և փորձաքննություն անցած նախագծանախահաշվային փաստաթղթերի պահանջների:
	Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով կատարվող աշխատանքների համապատասխանության ապահովում նախագծային լուծումներին, շինարարական նորմերին ու կանոններին:
	Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով օգտագործվող նյութական ռեսուրսների որակը հավաստող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև օգտագործվող նյութերը, իրերի և կառուցվածքների որակը, աշխատանքների կատարման տեխնոլոգիաները ստանդարտներին, տեխնիկական, նորմատիվ և նախագծային փաստաթղթերի այլ պահանջներին համապատասխանության ապահովում:
	Հսկողական ստուգման միջոցով իրականացվող աշխատանքների կատարման ժամկետների համապատասխանության, ինչպես նաև թերությունների բացահայտման և վերացման ապահովում:
	Հսկողական չափազորությունների միջոցով փաստացի կատարված շինմոնիտաժային աշխատանքների և նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների ծավալների և հաշվարկների համապատասխանության մշտական ապահովում:
	Կատարողական ակտի կազմման աշխատանքներին մասնակցության ապահովում:
4	<b>Ծառայությունների մատուցման ավարտում</b> – շինմոնիտաժային աշխատանքների ավարտի հետ:
5	<b>Ծառայության մատուցման ժամկետը</b>
	Սկիզբը Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից
	Ավարտը 30.09.2014թ.

**„Սիսիան համայնքի թիվ 5 դպրոցի պատերի և հիմքերի ուժեղացման,,  
աշխատանքների**

1	<b>Շինարարության որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման բնութագիրը</b>
	Աշխատանքների նկատմամբ /շինմոնիտաժային աշխատանքների կատարման բոլոր փուլերում/ հեղինակային հսկողության /այսուհետ՝ Հսկողություն/ ծառայության մատուցում
2	<b>Հսկողության ենթակա աշխատանքների անվանումը</b> /Համաձայն ծավալաթերթ նախահաշվի/
	Ուսումնական մասնաշենքի վնասված պատի և հիմքերի քանդման հողային աշխատանքներ, ամրացման և վերականգնման աշխատանքներ, պատերի, հատակների, պատուհանների և դռների քանդման ու նորի տեղադրման, ներքին և արտաքին հարդարման աշխատանքների իրականացում:

3	<b>Տեխնիկական առաջադրանք</b>				
	Հսկողության իրականացում համաձայն <b>Պատվիրատուի</b> կողմից պատվիրված և փորձաքննություն անցած նախագծանախահաշվային փաստաթղթերի պահանջների:				
	Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով կատարվող աշխատանքների համապատասխանության ապահովում նախագծային լուծումներին, շինարարական նորմերին ու կանոններին:				
	Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով օգտագործվող նյութական ռեսուրսների որակը հավաստող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև օգտագործվող նյութերը, իրերի և կառուցվածքների որակը, աշխատանքների կատարման տեխնոլոգիաները, ստանդարտներին, տեխնիկական, նորմատիվ և նախագծային փաստաթղթերի այլ պահանջներին համապատասխանության ապահովում:				
	Հսկողական ստուգման միջոցով իրականացվող աշխատանքների կատարման ժամկետների համապատասխանության, ինչպես նաև թերությունների բացահայտման և վերացման ապահովում:				
	Հսկողական չափագրությունների միջոցով փաստացի կատարված շինմոնտաժային աշխատանքների և նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների ծավալների և հաշվարկների համապատասխանության մշտական ապահովում:				
	Կատարողական ակտի կազմման աշխատանքներին մասնակցության ապահովում:				
4	<b>Ծառայությունների մատուցման ավարտում</b> – շինմոնտաժային աշխատանքների ավարտի հետ:				
5	<b>Ծառայության մատուցման ժամկետը</b>				
	<table border="1" style="width: 100%;"> <tr> <td style="text-align: center;">Սկիզբը</td> <td style="text-align: center;">Ավարտը</td> </tr> <tr> <td style="text-align: center;">Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից</td> <td style="text-align: center;">30.09.2014թ.</td> </tr> </table>	Սկիզբը	Ավարտը	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	30.09.2014թ.
Սկիզբը	Ավարտը				
Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	30.09.2014թ.				

**«Պ ա տ վ ի ր ա տ ու»**

ՀՀ Սյունիքի մարզպետարան  
 ք. Կապան Գ. Նժդեհի 1  
 ՀՀ ՖԼ Կենտրոնական գանձապետարան  
 Հ/Հ 900312000046  
 ՀԿՀՀ 09415375



Մ. Ղազարյան

**«Կ ա պ ա լ ա ռ ու»**

«ՎԻԼՀԱՍ» ՍՊԲ  
 ք. Կապան, Լեոնազործների 14/5  
 «Կապանի մարզային կառուցողական» ՓԲԸ, «Կապան» մ/6  
 ՀՀ ՖԼ Կենտրոնական գանձապետարան  
 Հ/Հ 900149005  
 ՀԿՀՀ 09416841



Վ. Բաղայան

**Կ Ճ Ա Ր Ա Ն Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց**  
**Հ Ե Ղ Ի Ն Ա Կ Ա Յ Ի Ն Հ Ս Կ Ո Ր ՈՒ Թ Յ Ա Ն**  
**Ծ ՈՒ Ա Յ ՈՒ Թ Յ Ա Ն Ի Ր Ա Կ Ա Ն Ա Ց Մ Ա Ն**

(<< Այունիքի մարզպետարան)

Աշխատանքի անվանումը	Աշխատանքի պայմանագրային գինը	Ֆինանսավորման գումարը ՀՀ պետական բյուջեից՝ ըստ 2014թ ամիսների											Ընդամենը	/Հազար դրամ/					
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր			Դեկտեմբեր				
„Քաջարան համայնքի թիվ 5 դպրոցի վերանորոգում,“	100.0																100.0		
„Գորիս համայնքի թիվ 3 դպրոցի վերանորոգում,“	100.0																	100.0	
„Սիսիան համայնքի թիվ 5 դպրոցի պատերի և հիմքերի ուժեղացում,“	330.0																	330.0	





Հավելված N1  
ՀՀ ֆինանսների նախարարի  
2013թ. օգոստոսի 6-ի N673-Ն հրամանի

Հավելված N 3  
27 հունիսի 2014թ. կնքված  
ՍՍ-ԲԸԱՀ-ԾՁԲ-14/04-2/1-2/4-2/7 պայմանագրի

**„ Պատվիրատու, „**  
ՀՀ Սյունիքի մարզպետարան  
Հասցե՝ ք. Կապան Գ. Նժդեհ 1  
ՀՀ ՖՆ Կենտրոնական  
գանձապետարան  
Հ/Հ 900311068028  
ՀՎՀՀ 09415375

**„ Կատարող, „**  
„ՎԻԼՀԱՄ, ՍՊԸ  
Ք. Կապան, Լեոնազորձների 14/5  
„ԱՇԻԲ, ՓԲԸ „Կապան, մ/ճ  
Հ/Հ 247080149005  
ՀՎՀՀ 09416841

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N

Հ Ա Ն Ձ Ն Մ Ա Ն - Ը Ն Դ ՈՒ Ն Մ Ա Ն

« .. » « .. » 2014 թ.

Պայմանագրի անվանումը \_\_\_\_\_  
Պայմանագրի կնքման ամսաթիվը 27 հունիսի 2014 թ. \_\_\_\_\_  
Պայմանագրի համարը ՍՍ-ԲԸԱՀ-ԾՁԲ-14/04-2/1-2/4-2/7 \_\_\_\_\_

„Պատվիրատուն, ի դեմս՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Ռ. Ավետիսյանի և „Կատարող, ի դեմս՝ „ՎԻԼՀԱՄ, ՍՊԸ-ի տնօրեն Վ. Բադալյանի հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված ստորև նշված աշխատանքները (այսուհետև աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին:

Պայմանագրի շրջանակներում „Կատարող, „ .. .. 2014թ. ից մինչև .. .. 2014 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները.

Կատարված աշխատանքների համառոտ նկարագրությունը	Կատարված աշխատանքների քանակական ցուցանիշները	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը /հազ.դրամ/	Վճարման ժամկետը (րստ ժամանակացույցի)
1	2	3	4	5
<b>Ընդամենը</b>				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքները հանձնեց՝

Աշխատանքներն ընդունեց՝